Կարգապահական գործ թիվ ԿԳ-24167

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԻՆԵ ՎԱՆԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահե Աստվածատրյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Արմինե Հակոբյանի,

քննության առնելով փաստաբան **Արմինե Վանիկի Հակոբյանին (այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 433), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Սամվել Ասոյանը **(այսուհետև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ),** տեղեկացրել է, որ «Հակոբյան Լոու Գրուպ» ՍՊԸ-ի հետ 01.06.2020թ. կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետև՝ Պայմանագիր),** որով փաստաբան Արմինե Հակոբյանը **(այսուհետև՝ Փաստաբան)** պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը վարձակալության իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին դատական գործի շրջանակներում:

Դիմողը հայտնել է, որ վճարել է Պայմանագրով նախատեսված գումարի մի մասը, ինչից հետո Փաստաբանը Գավառի քաղաքապետարանի դեմ հայց է ներկայացրել դատարան,

թիվ ԿԳ-24167-2-Ա
11.12.2024թ.

սեփականատեր չհամարվող անձի գույքային իրավունքների խախտումները վերացնելու պահանջով (թիվ ԳԴ/0564/02/20 քաղաքացիական գործ):

Դիմողի պնդմամբ, թիվ ԳԴ/0564/02/20 քաղաքացիական գործով Փաստաբանը հայցադիմումը կազմել է սխալներով, ինչի պատճառով վերադարձվել է, դատարանի որոշմամբ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդությունը մերժվել է, իսկ այդ միջնորդության դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը ևս մերժվել է:

Դիմողը հավելել է, որ թիվ ԳԴ/0564/02/20 քաղաքացիական գործի շրջանակներում Փաստաբանի միջնորդությամբ նշանակվել է փորձաքննություն, իսկ գործի վարույթը կասեցվել է, սակայն փորձաքննության անցկացման հարցը Դիմողի հետ չի համաձայնեցվել և ինքը չի իմացել, որ դրա վճարման պարտականությունը կարող է դրվել իր վրա:

Ըստ Դիմողի՝ նախքան ինքը հետամուտ է եղել գումարը հավաքելուն, Փաստաբանն ուղարկել է ծանուցում Պայմանագիրը լուծելու վերաբերյալ այն հիմնավորմամբ, որ Դիմողի կողմից չի վճարվել փորձաքննության կատարման վճարը, և փորձագետը չի տրամադրել եզրակացությունը, ինչի արդյունքում կասեցված թիվ ԳԴ/0564/02/20 քաղաքացիական գործը չէր կարող վերսկսվել, որպիսի հանգամանքը անհնարին է դարձրել փաստաբանական ծառայությունների մատուցումը շարունակելը, ինչպես նաև առաջարկել է վճարել Պայմանագրի գնի մնացած մասը, որի չկատարումը կարող է պատասխանատվություն առաջացնել Դիմողի համար:

Դիմողի պնդմամբ, ինքը կատարել է վճարում փորձաքննության համար և դրա փաստը հավաստող ապացույցով պատասխան գրություն է ներկայացրել Փաստաբանին՝ խնդրելով հայտնել՝ շարունակելու է արդյո՞ք Փաստաբանն իր գործի վարումը, որպեսզի հասկանա նոր փաստաբան ներգրավվելու անհրաժեշտությունը:

Պալատի նախագահի 20.08.2024 թվականի թիվ 01/03.5/1044-2024 ելից գրությամբ Դիմողին առաջարկել է ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ, ինչի կապակցությամբ Դիմողը 23.08.2024 թվականի բացատրությամբ հավելել է, որ կարգապահական վարույթ հարուցելու համար և դրա հետագա քննարկման ընթացքում կարևոր նշանակություն ունեցող տեղեկություններ կարող են լինել նաև թիվ ԳԴ/0564/02/20 քաղաքացիական գործի նյութերը, որը սակայն Դիմողը չի կարող ներկայացնել, քանի որ դրանք ամբողջությամբ գտնվում են Փաստաբանի մոտ և դրանք Փաստաբանը չի վերադարձրել Դիմողին:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է Փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Դիմողին ներկայացվել է 16.10.2024 թվականին կազմված պահանջ **(այսուհետ՝ Պահանջ)** Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 39.5-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 2024 թվականի հոկտեմբերի 19-ին ստացել է Պահանջը, սակայն կարգապահական վարույթի համար անհրաժեշտ բացատրություն և ապացույցներ չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Արմինե Հակոբյանին առաջարկվել է՝ Օրենքի 39.3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն Սամվել Ասոյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2024 թվականի օգոստոսի 23-ին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ *«Հակոբյան Լոու Գրուպ» ՍՊԸ-ի և Դիմողի միջև կնքվել է Պայմանագիրը, ինչից հետո ինքը հայցադիմում է ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գավառի քաղաքապետարանի՝ սեփականատեր չհանդիսացող անձի գույքային իրավունքների խախտումները վերացնելու պահանջի մասին:*

Փաստաբանը հայտնել է, որ Դիմողը պետք է վճարումը կատարեր Պայմանագիրը կնքելիս, իսկ այդ պարտավորության չկատարման հիմքով Պայմանագիրը կարող էր նաև լուծվել:

Անդրադառնալով բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու վերաբերյալ Դիմողի պնդումներին՝ Փաստաբանը հայտնել է, որ հայցադիմումը վերադարձվել է ձևական հիմքով, իսկ հայցի ապահովման միջոց ձեռնարկելը մերժելու որոշման և դրա դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը մերժելու որոշման համար Փաստաբանը պատասխանատվություն չի կրում, քանի որ ի վնաս վստահորդի կայացված դատական ակտն ինքնին հիմք չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

Փաստաբանը հայտնել է, *որ 16.05.2022 թվականին Դատարանը դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու մասին որոշմամբ իր կողմից ներկայացված հիմնավոր և գործի լուծման համար էական նշանակություն ունենալու հիմնավորմամբ ու պատճառաբանությամբ միջնորդությունը բավարարել է և փորձաքննության կատարումը հանձնարարվել է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին, ինչի մասին պարզաբանում է ներկայացվել նաև Դիմողին:*

Փաստաբանի պնդմամբ, *2023 թվականի նոյեմբեր ամսից ինքը Դիմողի հետ հանդիպումների և հեռախոսազանգերի ժամանակ բազմիցս բացատրել է, որ փորձագիտական վճարը չվճարելու և եզրակացությունը չստանալու դեպքում կասեցված քաղաքացիական գործը չի կարող վերսկսվել: 2023 թվականի նոյեմբերից մինչև 26.06.2024թ. Դիմողը հրաժարվել է փորձաքննության կատարման վճարը վճարելուց, ինչից հետո՝ 26.06.2024 թվականին ուղարկվել է Պայմանագիրը լուծելու վերաբերյալ ծանուցում:*

Նշվածի հաշվառմամբ, Փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Միևնույն ժամանակ սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբանին ներկայացվել Պահանջ՝ Օրենքի 39.5-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Ի պատասխան Պահանջի 24.10.2024թ. Պալատում մուտքագրվել է Փաստաբանի բացատրությունը, որով Փաստաբանը հայտնել է հետևյալը.

Պայմանագիրը լուծելիս հանձնարարության կատարման ընթացքում Դիմողի կողմից Փաստաբանին հանձնված և վերջինիս կողմից ձեռք բերված բոլոր բնօրինակ փաստաթղթերը գտնվում են դեռևս քննության փուլում գտնվող թիվ ԳԴ/0564/02/20 քաղաքացիական գործի վարույթում:

Պայմանագիրը լուծելուց հետո 20.06.2024թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավարին ուղղված Փաստաբանի հարցման (Հիմք 20.06.2024թ. թիվ ALO123217562AM ստացման փաստը հաստատող փոստային ծանուցագիրը) պատասխանը ստացել է 06.07.2024թ. (Հիմք 28.06.2024թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավարի թիվ Բ-2616 գրությունը, տեղեկանքը և փոստային ծրարը) և ուղարկել է Դիմողին (Հիմք 10.07.2024թ. թիվ ALO123469178AM ստացման փաստը հաստատող փոստային ծանուցագիրը):

Բացատրությանը կից Փաստաբանը ներկայացրել է 20.06.2024թ. թիվ ALO123217562AM ստացման փաստը հաստատող փոստային ծանուցագրի պատճենը, 28.06.2024թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավարի թիվ Բ-2616 գրության, տեղեկանքի և փոստային ծրարի պատճենը, 10.07.2024թ. թիվ ALO123469178AM ստացման փաստը հաստատող փոստային ծանուցագրի պատճենը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 05.09.2024թ. թիվ 353-Ա/ԿԳ-24167 որոշմամբ փաստաբան Արմինե Հակոբյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.8.4-րդ ենթակետի 3-րդ պարբերության խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

13.09.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Դավիթ Առաքելյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 11.11.2024թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-6-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 11.11.2024թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 11.12.2024թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. «ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՈՒ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ի դեմս տնօրեն Արմինե Հակոբյանի և Սամվել Լևիկի Ասոյանի միջև 01.06.2020թ. թվականին կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետ՝ Պայմանագիր):** *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրի պատճենով:*

2. Փաստաբանի և Դիմողի միջև 01.06.2020թ. կնքված պայմանագիրը լուծվել է: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Փաստաբանի 26.06.2024թ. ծանուցում գրության պատճենով:*

3. Թիվ ԳԴ/0564/02/20 քաղաքացիական գործի վարույթը դեռևս քննվում է դատարանում: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

4. Թիվ ԳԴ/0564/02/20 քաղաքացիական գործով 16.05.2022 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու մասին: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

5. 17.10.2024 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել կասեցված վարույթը վերսկսել և գործը դատաքննության նախապատրաստելու համար հրավիրել նախնական դատական նիստ՝ 2024 թվականի նոյեմբերի 19-ին, ժամը 11:00-ին, դատարանում: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա*

տեղեկատվությամբ:

6. 22.10.2024թ. բացատրությամբ Փաստաբանը պնդել է, որ բոլոր բնօրինակ փաստաթղթերը գտնվում են թիվ ԳԴ/0564/02/20 քաղաքացիական գործի վարույթում: *Սույն փաստը Դիմողը չի վիճարկել:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արմինե Հակոբյանը փաստաբան է հանդիսանում 24.06.2005թ. և 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արմինե Հակոբյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 3-րդ պարբերության պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ:* ***Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները***

մեկնաբանվում են փաստաբանի օգտին:

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Ըստ այդմ, անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.4 ենթակետի խախտմանը, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ Պայմանագիրը

լուծելիս փաստաբանը պարտավոր է՝

վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Ըստ այդմ, վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի վստահորդի փաստաբանի համար սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք ենթակա են կատարման ինչպես հանձնարարության կատարման ընթացքում, այնպես էլ դրա ավարտին՝ մասնավորապես, պայմանագիրը լուծելուց հետո վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործի վարույթը կասեցնելուց հետո մինչև դրա վերսկսումն արգելվում է գործով դատավարական գործողություններ կատարելը, բացառությամբ բացարկի կամ ինքնաբացարկի, հայցի ապահովման, ապացույցի ապահովման, հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու, փորձագետի միջնորդությամբ փորձաքննության կատարման ընթացքն ապահովելու, կատարողական թերթ տալու հետ կապված դատավարական գործողությունների:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դատավարական գործողությունները դատարանը կատարում է առանց գործի վարույթը վերսկսելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնների պահպանմամբ:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դատավարական գործողությունները կատարելու համար դատարանի նախաձեռնությամբ հավելյալ պարզաբանումներ ստանալու նպատակով կարող է հրավիրվել դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին ծանուցվում են գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 74-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի համաձայն՝ գործի քննության ընթացքում գրավոր ապացույցների բնօրինակները հետազոտելուց հետո դատարանը դրանք կարող է վերադարձնել ներկայացրած անձին, եթե նա միջնորդում է այդ մասին, և նման միջնորդության բավարարումը չի խոչընդոտում ապացույցների հետագա հետազոտմանը: Այս դեպքում գործին կցվում է փաստաթղթի բնօրինակի՝ դատարանի կնիքով հաստատված պատճենը կամ քաղվածքը:

Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո փաստաթղթերի բնօրինակները դրանք ներկայացրած անձանց միջնորդությամբ դատարանը վերադարձնում է, եթե այդ փաստաթղթերը վերադարձնելը չի հակասի վճռի բովանդակությանը և էությանը: Փաստաթղթերի բնօրինակները վերադարձնելու դեպքում գործում թողնվում է

փաստաթղթի բնօրինակի՝ դատարանի կնիքով հաստատված պատճենը կամ քաղվածքը:

Վերը նշված նորմերից հետևում է, որ քաղաքացիական գործի վարույթը կասեցնելուց հետո սպառիչ ներկայացված են այն գործողությունները, որոնք կարող են կատարվել: Նշված գործողությունների մեջ ներառված չէ փաստաթղթերի բնօրինակները դրանք ներկայացրած անձանց վերադարձնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հնարավորությունը:

Ըստ՝ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի թիվ ԳԴ/0564/02/20 քաղաքացիական գործով 16.05.2022 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու մասին:

17.10.2024 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել կասեցված վարույթը վերսկսել և գործը դատաքննության նախապատրաստելու համար հրավիրել նախնական դատական նիստ՝ 2024 թվականի նոյեմբերի 19-ին, ժամը 11:00-ին, դատարանում:

Այս կապակցությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողի և Փաստաբանի միջև կնքված պայմանագիրը լուծվել է 26.06.2024թ.: Այսինքն, կողմերի միջև կնքված պայմանագիրը լուծվել է այն ժամանակահատվածում, երբ գործի վարույթը եղել է կասեցված և Փաստաբանն անգամ իրական հնարավորություն չի ունեցել ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացնել փաստաթղթերի բնօրինակները վերադարձնելու միջնորդություն:

Հարկ է նաև նշել, որ անգամ գործի վարույթը կասեցված չլինելու պայմաններում, Դատարանը կարող էր նաև չվերադարձնել գրավոր ապացույցների բնօրինակները, որ վերջինս էլ վերադարձներ իր վստահորդին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ նման պայմաններում Փաստաբանին չի կարող վերագրվել փաստաթղթերը վերադարձնելու պարտականության չկատարման վարքագիծ, քանի որ Դիմողի կողմից հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերի բնօրինակները գտնվել են Դատարանի տիրապետության ներքո:

Հանձնաժողովը փաստում է նաև, որ ի պատասխան Փաստաբանի գրության, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավարը 28.06.2024թ. կազմել է Բ-2616 գրության որով Փաստաբանին տրամադրել է Դիմողի գույքահարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը, որը Փաստաբանի կողմից ուղարկվել է Դիմողին:

Միաժամանակ, Հանձնաժողովը հարկ է համարում նաև նշել, որ 16.10.2024 թվականին Դիմողին առաջարկվել է ներկայացնել հետևյալ տեղեկությունները և ապացույցները.

- Փաստաբանին փաստաթղթեր հանձնելու վերաբերյալ ապացույցներ,
- Փաստաբանին հանձնված փաստաթղթերի ցանկի և Փաստաբանի կողմից Ձեզ վերադարձված փաստաթղթերի ցանկի վերաբերյալ ապացույց:

Դիմողը 2024 թվականի հոկտեմբերի 19-ին ստացել է Պահանջը, սակայն կարգապահական վարույթի համար անհրաժեշտ բացատրություն և ապացույցներ չի ներկայացրել:

Վերոգրյալից հետևում է, որ կարգապահական վարույթի ընթացքում Դիմողը փաստացի չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, թե կոնկրետ ինչ փաստաթղթեր են մնացել Փաստաբանի մոտ, որոնք վերջինս կարող էր վերադարձնել, սակայն չի վերադարձրել:

Նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև գործում առկա ապացույցները իրենց համակցությամբ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանին վերագրվող Կանոնագրքի 3.8.4 (3) ենթակետերի պահանջի խախտման մասով չեն հաստատվել, որպիսի պայմաններում էլ հիմնավորված չէ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Արմինե Վանիկի Հակոբյանի (արտոնագիր՝ թիվ 433) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.4 (3) ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-24167 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-24167-2-Ա
11 դեկտեմբերի 2024թ.
ք.Երևան